

այդպիսի պատկերներ և ի՞նչպիսի գծազրութիւն ունին նոքա. և երկրորդ աչքի առաջ ունենալով, որ ս. Աստուածածնի անուանը նուիրուած բազմաթիւ հին վանքեր կան, պէտք է մտածել, որ նոքա ունեցել են և պատկերներ քանդակուած կամ նկարուած. նոյն Տիրամօր նկարներով լի են և Հայոց զրչեայ մատեանները. ցանկալի է հրատարակել այդպիսի քանդակների և նկարների մի ժողովածու որպէս զի կարելի լինի նոցա ուսումնամիրութեամբ գաղափար կազմել թէ ո՞րն է այն առանձնութիւնը, որով ջոկուում էին Հայոց պատկերներն ուրիշներից:

Կ. Դ.

(Եարունակելի).



Ա. Գ. Ք. Ա. Տ. Ն. Ե. Բ. Ի. Խ. Ն. Ս. Մ. Ա. Ս. Ա. Ռ. Ո. Ւ. Թ. Ի. Ի. Ն. Բ.

Քրիստոնեութեաւ ՑԱՊԹԱԼԹԻՒԹԻՒՆԻ ՑԵՏՈՅ. *

(Եարունակութիւն) **



Բ.

Աղքատների խնամատարութիւնը մինչեւ Կոստանդին բացառապէս համայնական բնաւորութիւն ունէր. բայց նորանից յետոյ եկող ժամանակի մէջ ուրիշ կերպարանք է ստանում: Այս շրջանի մէջ համայնական խնամատարութիւնն համարնով իւր զարգացման բարձր կէտին՝ հետզետէ ընկնում է, և նորա անդ սկսում են ծաղկել հաստատութիւնները: Որքան և ցանկալի էր աղքատների խնամատարութիւնը համայնական կերանքի հետ սերտ կապուած տեսնել, բայց և այնպէս պատմական անհրաժեշտութիւն էր հաստա-

* Այս վերնագրի տակ կարելի էր ամփոփել իսկապէս ամբողջ եկեղեցու պատմութիւնը, Կոստանդինից սկսած մինչեւ մեր օրերը, բայց մեր նպատակը չէ աղքատների խնամատարութեան պատմութիւն գրել այլ միայն մատնացյաց անել այն բնորոշ գծերի վերայ, որ մեզ համար անհրաժեշտ է աղքատների խնամատարութեան մասին որոշ գաղափար կազմելու համար: Մենք կանգ կառնենք յատկապէս հնագոյն եկեղեցու պատմութեան վերջին կիսի վերայ, որ Հայաստանեայց եկեղեցու համար առանձին նշանակութիւն ունի:

** Տես Արարատ համար Ե. և Զ. .

տութիւնների երեան դալլ: Այս շրջանի մէջ քրիստոնէական սիրոյ զործունէութիւնը, դռա հետ և աղքատների խնամատարութիւնը, կեդրոնանում է հաստատութիւնների և վանքերի մէջ:

Այս փոփոխութեան պատճառներն էին եպիսկոպոսական վիճակների ընդարձակուելը, աղքատների բազմանալը և վանքերի յառաջ դալլ: Քրիստոնէութիւնը պետական կրօն դառնալով՝ քրիստոնեանների թիւը օրէցօր ասանեակ հազարներով էր աճում, որի անմիջական հետեանքն էր և եպիսկոպոսական վիճակների ընդարձակուելը: Եպիսկոպոսը որ առաջ ամենաշատը 3—5 հազար էր հոգուում, այժմ պէտք է տասնեակ, մինչեւ իսկ հարիւր հազարներ կառավարէր: Բնական է, որ նա այլ ևս այնպիսի անհաստական խնամք տանել չէր կարող, ինչպէս առաջ տեսանք, մանաւանդ, որ սկզբներում եպիսկոպոսական թեմերը աւելի մանր վիճակների բաժաննելը ընդհանուր սովորութիւն չէր: Իսկ համայնական խնամատարութեան բնորոշ գծերից մէկը անհաստական խնամքն էր: Միւս կողմից անընդհատ պատերազմներն ու բարբարունների արշաւանքներն և հարկերի ծանրութիւնը ժողովուրդը վերին ասաիձանի աղքատութեան էր հասցրել: Այս ժամանակը հռովմէական պետութեան նիւթական քայլայման շրջանն է կազմում: Պետութիւնն անկարող լինելով այնպիսի ընդարձակ աղքատութեան գէմ մաքառել եկեղեցին էր, որ իւր բոլոր կարողութեամբ աշխատում էր մեզմացնել տիրող թշուառութիւնը, մինչեւ իսկ ցորենի բաշխումը աղքատ ժողովրդին, որ հռովմէական կայսրութեան հնաւանդ սովորութիւններից մէկն էր, անցնում է եկեղեցու ձեռքը: * Հասկանալի է, որ այսպիսի պայմանների մէջ եկեղեցին այլ ևս անկարող էր իւր սովորութեան համեմատ անհաստական խնամք տանել աղքատներին: Եկեղեցական վարչութիւնն այլ ևս անկարող էր տասնեակ հազարաւորների անհաստական հանգամանքներն ուսումնասիրել կը ել և ըստ այնմ կարգադրութիւններ անել: Մին-

* Moeller - Lehrbuch der kirchengeschichte I եր. 330.

չեւ այժմ եկեղեցու պաշտօնեաներն էին որունում զանում աղքատներին, այժմ՝ նոքա պէտք է խմբուէին նոյն սպասաւորների շուրջը, որպէս զի վերջններս հնարաւորութիւն ունենային օգնութեան հասնելու։ Եկեղեցու պաշտօնէութեան կենդանի սէրն ու պարտքի զգացումը դէպի աղքատներն ու տառապեալները պէտք է ստիպէր նրանց այս զրութիւնից դուրս գալու և ահա այս ձանապարհը նա հաստատութիւնների մէջ դատաւ։ Նոքա պէտք է հաստատութիւններ հիմնէին, ուր աղքատներին, կարօտեալներին հաւաքել և խնամել կարողանային։

Մենք պատճառների մէջ յիշեցինք և վանքերի հանգէս գալը։ Արդարեւ այդ երեսութը շատ մեծ զարկ է տուել քրիստոնէական հաստատութիւնների զարգացման ընթացքի վերայ։ Քրիստոնէութեան պատճութեան այս ժամանակի բնորոշ գծերից մէկն է, որ հաւատացեալը կեանքի մէջ այլ ևս իւր համար նուիրական գաղափարներով ապրելու յոյս չունի, նա առանձնութիւն կամ այնպիսի հասարակութիւն է որոնում, որ նոյն տենչերն ու գաղափարներն ունի ինչպէս և ինքը։ Այստեղից է ծագում և զարգանում վանական կեանքը, որ իւր ժամանակի քրիստոնէայի գաղափարական կեանքն էր։ Կենդանի հաւատան ու քրիստոնէութիւնը վանքերի մէջ կեդրոնանալով՝ բնական է, որ վանականութեան մէջ երեան զար և կրօնական անձնաւորութեան միւս բնորոշ զիծը՝ սէր դէպի ընկերը։ Քրիստոնէական սիրոյ գործունէութեան՝ հետեւապէս և աղքատների խնամատարութեան՝ կեդրոնն այժմ վանքելն են դառնում ։ Վանականութեան ծագումն համեմատարար աւելի հին է։ բայց Բարսեղ Կեսարացին էր, որ առաջին անգամ նորան նպատակայարմար կազմակերպութիւն տուաւ։ Այսուհետեւ վանքերը քրիստոնէական գիտութեան, արուեստի, աշխատասիրութեան և բարեգործութեան կեդրոնները գարձան։ Մեր նպատակից դուրս է բացատրել միւս կէտերը, ուստի և հակիրծ խօսքերով մատնացոյց անենք միայն վանքերի գերը բարեգործութեան վերաբերութեամբ։ Բարսեղ Կեսարացու կանոնների միտքը հերարդական կամականութիւնը հետզհետէ տարածւում է և արևմուտքում ժամանակի

դօթք, ճգնութիւն, զիտութիւն և աշխատանք։ սոքա այն տարրերն են, որ վանականի կեանքի բովանդակութիւնը պիտի կազմէին։ Սորա կանոնների մէջ յատկապէս շեշտուումէ աշխատանքի գաղափարը։ Աշխատանքը վանական կեանքի սրբութեան և շահազործութեան միջոցն է, աշխատաւութեամբ վանականը ազատ է գայթակղութեան որոգայթներից։ Աշխատաւութեամբ վանականները ոչ միայն իրենց հացըն են վաստակում, այլ և աւելացածով բարեգործութիւն անում։ Ընտրելի է այնպիսի աշխատանքը, որը վանականութեան խաղաղութիւնը չի խանգարում։ Վանքերը նոյնպէս և մանուկների գաստիարակութեան կեդրոն պիտի գառնային որի համար Բարսեղ Կեսարացին և կանոններ է հաստատում։ Նման կազմակերպութիւններ են ստանում և ուրիշ երկրների վանականութիւնները։ Ոսկերերան աշխատասիրութեան և աղքատասիրութեան կենդանի օրինակներ է համարում Նզիպասի վանականներին։ Նոքա զգիշերն ընդ նուիրական օրհնութիւնն և ընդ տընութիւնն հանեն, և զտիւս յաղօթս միանգամայն և ի ձեռագործութիւնն ծախեն։ զի մարմայ վաստակովք զպէտս չքաւորացն ի կերակրոյ վճարիցին։ * Օգոստինոսի ասելով՝ Ասորիքի վանականները իրենց աշխատասիրութեամբ և շափաւոր կեանքով այնքան վաստակ ունեն, որ նաւերով պաշար էին ուղարկում զանտզան երկիրներ։ Թալասիուս վանականը Նփառտի հովանում իւր շուրջն հաւաքելով՝ խնամում էր կոյր մուրացիկաններին։ քրիստոնէական երգեր և սալմոններ էր սոփորեցնում նուրանց, որ երգումէին այցելուների առաջ։ ** Դորանով թէ կոյրերն էին միսիթարեւում և թէ հասարակութեանն օգնում իրանց կարողութեան չափ։ Վանքերից շատերը ասպնջանոց էին, ուր պանդուխանները հիւանդները, աղքատները խնամք և ապաստարան էին գտնում։ Վանականութիւնը հետզհետէ տարածւում է և արևմուտքում ժամանակի

* Յովհաննու Ասկերերանի կ. Պօլսի եպիսկոպոսակետի յաւետարանագիրն Մատթէոս. Վենետիկ. 1826 եր. 121.

** Uhorn. Die Christliche Liebesthätigkeit I. եր. 352.

ընթացքում վանքերը քաղաքակրթութեան որորաններ են գառնում:

Կաստանդինից մինչև Քաղկեդոնի ժողովը կարելի է քրիստոնէական եկեղեցու ոսկեղար անուաննել: Հաղածանքի գարերում խնամուածքորոշներն սկսում են ծաղկել ամենակատարեալ կերպով: Եկեղեցական զիաւութիւնն ու վարչական կազմակերպութիւնը նիւթական կարտղութիւնն ու բարոյական զրամագլուխը միեւնաց համապատասխան կատարելութեան մէջ են Եկեղեցին գառնում է հրոսովմէական կայսրութեան ամենազդիսուոր գործօնը ամեն կողմից: Այս շրջանումն են ծաղկում եկեղեցու ամենաշանաւոր հոյրերը՝ և Աթանաս, Լուսաւորիչ, Բարսեղ Կեսարացի, Ներսէս Մեծ, Գրիգոր Սաղիանզացի, Գրիգոր Նիւացի, Ռոկերերան, Սահմակ Պարթև, և Մեսորոպ, Եփրեմ Ասորի, Կիւրեղ Ազգէքանդրացի, Ամբրոսիոս Հերոնիմոս, Օգոստինոս, իսկ Եկեղեցական մատենազդիների թիւն անչափ էր: Սա մի նշան էր, թէ ի՞նչ բարոյական ոյժ ունէր Եկեղեցին: Եկեղեցու ոյժը միշտ քրիստոնէական ողին է եղել բայց ոյս շրջանը մեզ համար մի կենդանի օրինակ է, թէ այդ ոգու զիսաւոր յայտաբարները դիտութիւնն ու անձնաւորութիւններն են: Գրիտութիւնը ոյժ է՝ նախագտառութիւնը՝ ճշշմարտութիւն է և Եկեղեցու համար: Այս է ապացուցանում մեղ Եկեղեցու պատմութեան ամեն մի փառաւոր շրջանը:

Հասկանալի է, որ այսպիսի անձնաւորութեանց շնորհիւ պէտք է ծաղկեր նաև աղքատների ինամատարութեան գործը, որ սկզբից և եթ քրիստոնէական կեանքի մի մասն էր կազմում: Աղքատների համայնական խնամատարութիւնը ամենաբարձր զարգացման հասնելով՝ սկսում է ընկնել. բայց նորա տեղ երևան են զալիս հաստատութիւնները, որ քրիստոնէական Եկեղեցու ներքին կեանքի մարդարիտներն են պատմութեան ընթացքում և այժմ: Ընկնում է համայնական խնամատարութիւնը, բայց Եկեղեցին աղքատների մարդիկ վաշյելում են Եկեղեցու շնորհքը: Ռոկերերանի ժամանակ Անտիոքի այրիների և կոյսերի թիւը 3000 էր, որց վերս պէտք էր աւելացնել նաև բազմոթիւ բանդարկեալներն ու տապընջականները, պանդուխաններն ու բորսոները, որոնց Եկեղեցին հայ, և հագւառ էր մատակարարում: Անտիոքը Ռոկերերանի ժամանակ 100,000 բնակիչ ունէր, որից 10,000 հարուստ, նոյնքան աղքատ և մեացածը միջին դաստիարագին էր պատկանում: Այսպիսի բազմութիւն այլ ևս անկարելի էր անհաստիւ:

Քրիստոսի հոգին կենդանի կերպով ներգործում է եկեղեցու մէջ մեզմացնելու, սփոփելու տիրող տղեաները: Եկեղեցին բարեբարդարար այժմ ամեն կողմից յաջող պայմանների մէջ է իւր կոչման հաւատարիմ ծառայելու: Այժմ նա բացարձակ աղաւութիւն է, վայելում իւր գործունեութիւն մէջ, մինչև իսկ քոջալերութիւն և պաշտպանութիւն է ստանում պետութեան կողմից: Տուքքերն ու նուերները շատ աւելի առատ են քան առաջ, և պիսկոպուների արտօնութիւններն ու մանաւանդ բարոյական արժանաւորութիւնները բարձրացնում են Եկեղեցու հեղինակութիւնը որ և ամենափայլուն կերպով գործադրուում է ի շինութիւն հօտի բարոյապէս և նիւթապէս: Աղքատների խնամատարութիւնն ակրանքները նշյն են մնում: Բայց արագութեան աւելի մեծ ծաւալ է ստանում նա: Այժմ այլ ևս պիսկոպուր այնպիսի մեծ դեր չէր կարող խաղալ աղքատների խնամատարութիւնն գործում: Գործի գիւրութիւնն համար քաղաքները շրջանների են բաժանուում սարկաւագների թուի համեմատ: Ի պաշտօնէ գործող սարկաւագներին և սարկաւագներին աշակեցում են կամաւորները: Հաստատութիւնների հետ երեան են զալիս նոր պաշտօնէութիւններ, հիւանդապահներ, և պիսկոպոսի անմիջական իշխանութիւնն ենթարկուած: Սարկաւագները որոնում և գտնում են հաստատութիւններից զուրս այնպիսի աղքատներ, որոնք ամօթից իրենց անձը յայտնել չեն կամենում: Հաղարաւոր տառապեալները այրիներ, որբեր, հրւանդներ, անդամալուծներ, աշխատանքի անընդունեակ մարդիկ վաշյելում են Եկեղեցու շնորհքը: Ռոկերերանի ժամանակ Անտիոքի այրիների և կոյսերի թիւը 3000 էր, որց վերս պէտք էր աւելացնել նաև բազմոթիւ բանդարկեալներն ու տապընջականները, պանդուխաններն ու բորսոները, որոնց Եկեղեցին հայ, և հագւառ էր մատակարարում: Անտիոքը Ռոկերերանի ժամանակ 100,000 բնակիչ ունէր, որից 10,000 հարուստ, նոյնքան աղքատ և մեացածը միջին դաստիարագին էր պատկանում: Այսպիսի բազմութիւն այլ ևս անկարելի էր անհաստիւ:

խնամել թէպէտ և այս վերջին ձեւն էլ շարունակուում է հաստատութիւնների հետ:

Հաստատութիւնների ծագումն անհրաժեշտ էր այս ժամանակի համար՝ պանդուխունների, թշուառների թիւն այժմ այնպէս մեծ էր, որ այլ ևս եպիսկոպոսի բնակարանում պատսպարելն անկարելի էր, ինչպէս առաջ սովորութիւն էր: Ժամանակն այժմ կարգաւորութիւն, կազմակերպութիւն էր պահանջում և այդ պահանջի արդիւնքն էր քրիստոնէական ասպնջանոցը: Հեթանոսութեան մէջ, ինչպէս յիշել ենք, այդպիսի հաստատութիւններ չկային. հիւանդանոցներ կային միայն զինուորների և ստրուկների համար: Ասպնջանոցը քրիստոնէական սիրոյ պառող էր, ուր պանդուխուերը աղքատները, որբերն ու այրիները, հիւանդներն ու տառապեալները ոչ միայն օթեան, այլ և խնամք էին գտնում: Սոցանից են հետզետէ ծագել և զարգացել այն բազմատեսակ հաստատութիւնները, որ քրիստոնէական քաղաքակրթութեան փառքն ու պարծանքն են կազմում: «Եթէ այս ժամանակը միայն մի գործ արած լիներ, այն է ասպնջանոցի հաստատութիւնը» ասում է Ռուչորն: * գորանով միայն մի մեծ և շնորհակալութեան արժանի գործ կատարուած կը լինէր»: Քրիստոնէական եկեղեցին բաց ճակատով պարծենալ կարող է, որ ասպնջանոցը նորա գործունէութեան արդիւնքների մի փոքրիկ նշխարն է միայն:

Ասպնջանոցների և աղքատանոցների ծագումը միշտ յայտնի չէ. ոմանք նոստանդնի ժամանակն են ընդունում: ուրիշները աւելի յետոյ. այսքանս միայն յայտնի է, որ կոստանդնից առաջ այդպիսի հաստատութիւններ գոյութիւն չեն ունեցել: Յուլիանոս ուրացողի ժամանակ արդէն այդ հաստատութիւնները բաւական տարածուած էին, և նա փորձում է վերանորոգուած հեթանոսութեան մէջ ևս այդպիսի հաստատութիւններ հիմնել քաջ հասկանալով նոցա նշանակութիւնը: Բայց իսկապէս այդ գործն սկսուում է չորրորդ դարու վերջերից. 370 թ. Բարսեղ Կեսարացին հիմնում է իւր նշանաւոր ասպնջանոցը,

որ օրինակ է գառնում Կապաղովիայի միւս քաղաքների համար: Բարսեղ Կեսարացու օրինակին է հետեւում Հայոստանում և Նկրսէս Մ'եծ: Եփրեմ Ասորին 375 թ. Եպեսիայում մի հիւանդանոց հիմնեց 300 մահճականներով: նա խնամում էր նոյնպէս պանդուխուններին և աղքատներին: Ոսկերերան շատ համեստ կեանք էր վագում: որպէս զի խնայած գումարով Պօլսում ասպնջանոցներ հիմնէ. նա 7700 աղքատ էր խնամում: Հաստատութիւնները շատ բազմատեսակ են՝ հիւրանոցներ, հիւանդանոցներ, այրիանոցներ, որբանոցներ մանուկների կրթարաններ, ծերունիներ և աղքատ ծննդականներ խնամելու հաստատութիւններ: Շատ վանքերում կոյլերն ու համբները, գմերը խնամք և ապաստաննեն գտնում: Անկեալ կանանց համար մինչև իսկ հաստատութիւններ կային: ուր նոքա ապաշխարում էին, քրիստոնէական սէրը այդ թշուառների վրկութեան համար ևս հոգ էր տանում: Հաստատութիւններ հիմնելու սէրն ու եռանոցը արեւելքից Եւրոպա է անցնում և այնտեղ բարձր զարգացման համառում: Քրիստոնէական եկեղեցին ոչ միայն պահում և խնամում էր աղքատներին, այլ և աղքում էր օրէնսդրութեան վերայ աղքատութեան գործը կանոնաւորելու: Թէոդորոս կայսը օրէնքով արքելում է փողոցներում մուռալը: Աշխատանքի անընդունակները միայն կարող էին մուռալ իսկ առողջ մուռացիլը կը կրցնէր իւր աղքատութիւնը: Յուստինիանոսի ժամանակ այս օրէնքը աւելի է կատարելագործում, ստրուկ մուռացիկը տիրոջն է յանձնուում: իսկ ազտաին գործ է առաջարկուում, խուսափելու գէպքում աքսոր:

Բարեբազգարար եկեղեցին նիւթական կողմից այնպիսի վիճակի մէջ էր, որ այսպիսի մեծ ձեռնարկութիւններ սկսել կարող էր: Կոստանդնին մեծի ժամանակուանից եկեղեցին իրաւաբանական մարմին էր համարուում: որ կարող էր ամեն տեսակ սեպհականութիւնների տէր լինել. * կայսրներից սկսած մինչև հասարակ քաղաքացիները պարագ էին համարում եկեղեցուն նուերներ տալ: Եկեղեցին

* Յիշուած երկի I. եր. 317.

* Moeller. kg. I 330.

է ստանում այժմ այն եկամուաները, որ առաջ հեթանոսական տաճարներին էին պատկանում: Կտակները նոյնպէս եկեղեցու զինաւոր եկամուաների մի մասն էին կազմում: Բարեպաշտութիւնն այնպէս բուռն էր և կենդանի, որ շատ ծնողներ զրկում էին իրենց զաւակներին և եկեղեցուն նուիրում: որի դէմ եկեղեցու պաշտօնէութիւնը երբեմն ստիպուած էր մաքառել: Եկեղեցու սովորական եկամուանի աղբիւլներից մէկն էլ տասանորդն է, որ այժմ սկսում է արդէն օրէնքի բնաւորութիւն ստանալ: Սորա վերայ պիտի աւելացնել և սովորական ողորմութիւնները: Եկեղեցական հայրերն իրենց ճարտասանական տաղանդն ու հնարը գործադրում են հաւատացեալների գէպի աղքատներն ունեցած սէրը վառ պահելու: Առանց բացառութեան կարելի է ասել այս շրջանի բոլոր հայրերը քարոզներ և ճառեր ունին այս նպատակով զըրուած: Յովհան Ռուֆերերանի ճառերի ու մեկնութիւնների մէջ բազմաթիւ կտորներ կան աղքատներին նուիլուած: Նա յորդորում է իւր ունկնդիլներին չնեղելոց վերակացու լինել, աղաջում է մի անողորմ և անազուրոյն լինել նոցա գէմ: և Պօղոսի խօսքերով «Որ ոչ կամիցի գործել, և կերիցէ մի» շատ մեղադիր չլինել աղքատներին, այլ յիշել նորա միւս խօսքը «Դուք մի ձանձրանայք զբարիս գործել: «Զի եթէ գու յողորմածութիւնս պատրաստ էիր, ապա վաղվաղակի իսկ և աղքատն ի վատութենէն զերծանէր և գու յանագորոյն մտաց: Նա յիշեցնում է, որ երկրաւոր բարիքը Աստուծոյ պարգևն է, որից և աղքատներին բաժին պիտի հանենք: «Քանզի Նա (Աստուծ) յղէ առ մեզ զաղքատս, և զնորայն տամք, եթէ տայցեմք արդիւնք» * ինչպէս Քրիստոս մեզ ժառանգակից է արել այնպէս և պարտաւոր ենք մեր եղբօրը մեր երկրաւոր բարիքին ժառանգակից անել: «Զգեցոյց քեզ հանդերձ փրկութեան ինքնին անձամբ: գու գէթ ծառայիցն հրամայեսջիր զգեցուցանել զմերկա: Արար զքեզ փառաւոր յերկինս գու ի սարսույն ապրեցուցանիջիր,

զմերկութիւնն ծածկեսջիր: Արար զքեզ քաղաքակից հրեշտակաց, գու զոնէ մի օր տաշիր վանս իրեւ ծառայիր ի քում տանն: * Ի՞նչ սուր լեզու է բանեցնում նա երիտասարդութեան պՃնասիրութեան գէմ: որով նա «յորժամ՝ զաղքատն աեսանիցէ, առ զութ պաճուճանացն իրեւ զշտեսեալ համարի, զօդն (ոտքի) ոսկով զարգարէ, և զնա վտաեալ ի սովոյն անսես առնէ: ** Աւելի խիստ ոճով խօսում է նա կանանց և օրիորդների պՃնասիրութեան գէմ: *** «Աղէ գու ցոյց ինձ: Եթէ գու զի՞նչ օգուտ ունիցիս ի մարգարիան յայն, յորժամ՝ զգենուս հաստ մարգարարի մեծագինս, և բիւրք աղքատաց սովագնեալս տագնապինս: «Զի՞նչ ունիցիս ասել, յորժամ՝ թագաւորն կոչէ զքեզ վասն այսր մարգարարի և ոսկոյց: և ածէ ի մէջ զաղքատս, որ սովորք ապականեալք են, որոց պարտ էր զհասարակն տալ կամ գէթ տասանորդս բաշխել նոցա: «Ասեր ոսկի ոչ զի զմարմինդ կապեսցես, այլ զի զաղքատս զգեցուցես և կերակրեսցի: Հարուստներին այս խօսքերն ուղղելով մի և նոյն ժամանակ անկարողներին յիշեցնում է, որ Աստուծած «Հոգի միայն ինըքէ սրբասէր լի հաւատով» և «Եթէ և բաժակ մի ցուրտ ջուր տայցես, և զայս սառւգութեամբ պահեսցէ: Բայց նոքա ոչ միայն քարոզում այլ անձամբ օրիեակ էին լինում հաւատացեալներին: Նոքա նուիրաբերութեան մէջ ժողովրդից յետ չէին մնում: Բարսեղ կեսարացին իւր ամբողջ կարողութիւնը աղքատներին նուիրեց: Ամբոսիս եպիսկոպոս գառնալուց յետոյ իւր ահազին կարողութիւնը եկեղեցուն թողեց աղքատներին բաժանելու համար: Օգոստինս յորդորում էր իրեն թանկագին հագուստներ չնուիրել այլ այնպիսի նուեկներ տալ, որ աղքատներին բաժանել կարողանայ, ստացանդները ծախում և աղքատներին էր բաժանում: Ռոկերերան ամենապարզ կեանք էր վարում: որպէս զի միջոց ունենայի կ. Պօլսի բազմաթիւ աղքատներին ինամելու: նա օրական 7700 հոգի էր կերակրում: և

* Յովհ. Ռոկ. յաւետ. Մատթ. եր. 658.
*** եր. 710. **** 312—316. զիրք Գ. և Ճառք
1861. եր. 166—171.

երկու ասպնջանոց էր հիմնել Պօլսում։ Մինչև իսկ աքսորանքի ժամանակ ստացած նույնը գործադրում՝ էր նսաւրացի զերիներին աղատելու։ * Մարդ զարմանում է այս ժամանակի եկեղեցական հայրերի անձնաւորութեան վերաբյ որ իւրաքանչիւր որ ձեռքերը բաց են անում քաղցեալներ կերակրելու և մերկեր հազցնելու, որ իրենք միլիոններ են ծախսում բայց իրենց անձի համար աղքատութիւն ընտրում։ Նորանց հողին ներգործում է և հօափի մէջ և շատերը նոյն ծանապարհն են բանում։ ինչպէս և հոգիւները, մանաւանդ շատ «աղնիւ օրիորդներ և տիկիններ», որոնց ամբողջ կեանքը բարեկործութիւն էր, ինչպէս Փարիւրաց Պառելա և ուրիշները, որ հոգիմէական աղնուականութեան ամենանշանաւոր ցեղերին էին պատկանում։ Աղքատների խնամատարութիւնը այնպիսի ծաւալ և կաղմակերպութիւն չէր ստանալ, եթէ զինէին այնպիսի անձնաւորութիւններ, որոնց անունները հարեւանցի կերպով յիշեցինք մենք։ Որքան և ցանկալի լինէր մի քանի կինդանի պատկերներ բերել ժամանակի ողին ըմբռնելու համար մենք ստիպուած ենք թողնել տեղի սղութեան պատճառով։ Նոցա բոլորի սրտում Քրիստոսի սէրն էր թագաւորում և այս ամենը այդ սիրոյ պատուին էր։

Սակայն մենք այս զլուխը փակել չենք կամենալ առանց մի քանի խօսք տանելու նաև Հայաստաննեայց եկեղեցու մասին։ Ուր Քրիստոսի աւետարանն էր քարոզուել այնակղ ծաղկել էր և Նորա սէրը։ Այսպէս պէտք է լինէր և մեր հայրենիքի սրբազն հողի վերաբյ Թէ՛ ինչպէս է եղել նախալուսաւորչեան ժամանակում մենք տեղեկութիւն չունինք, բայց հաւանօրէն նոյն համայնական կաղմակերպութիւնն ունէր, ինչպէս քրիստոնէական միւս համայնքներում։ Լուսաւորչի քարոզութեամբ քրիստոնէութիւնը պետական կրօն դառնալով Հայաստանում՝ պէտք է փոփոխութիւն մտնէր նաև աղքատների խնամատարութեան գործունեութեան մէջ։ Յաձախապատումի մէջ մենք շատ նախադասութիւններ ունինք, որ

րակ բարեկործութեան է վերաբերում։ Մեր կանոնագրքի մէջ ցուցումներ ունինք, որոնցով մեր նախնիք հաւատացել են, որ վանական կաղմաւթիւնն արդէն լուսաւորչի ժամանակուանից է իւր սկիզբն առնում։ * Այսպէս մի կանոն, որ պէտք է նորոգուած լինի ա, Սահակ Պարթևի ժամանակ, յայտնում է ո՞ո ոչ միայն առ օտարս է նոցա յաճախել, ոյլ և, առաւել գեղջն, յորում շինեցաւ, զի օրէն է նոցա սփոփել զիհւանդս եւ միսիթարել զազաւորս։ Մի ուրիշ կանոն որոշում է ազարից (սիրոյ Ճաշից) վանականներին հասանելիքը և աւելացնումէ, «Եւ պանդուխոր, որք ի տունս քահանայիցն են՝ և նոցին եղբարց նոյնական տացեն, և զամենայն պատարագս հասարակաց կերիցեն պաշտօնեայք և աղքատք բազում մեծարանօք և եղբարք հաւատացեալք» ** Եթէ այս կանոնների վաւերականութիւնը մեզ համար մինչև իսկ կասկածելի լինի Ներսէս Մեծից առաջ եղած ժամանակի համար, յամենայն գէպս սա մի փաստ է, որ Հայաստաննեայց եկեղեցու մէջ ևս մօտաւորապէս նոյն կէտերն ենք տեսնում, ինչ որ մենք տեսանք ընդհանուր եկեղեցու մէջ։

Աղքատների խնամատարութեան մասին Հայաստաննեայց եկեղեցու մէջ հաստատ տեղեկութիւններ ունինք արդէն Ներսէս Մեծից սկսած։ Բարսեղ Կեսարացու վանականութեան բարեփոխութիւններին անմիջապէս հետեւումէ, Ներսէս Մեծ, որ՝ Փաւստոսի ասելով՝ Աշտիշատի ժողովով որոշեց շինել աղքատանոցու, և և ի ժողովել զախտաժետս և զօրկունս և զմարթնավարս և զամենայն ցաւոսու և նոցին կարգեցին օրկանոցու և զարմանոց և ռոճիկս և պատճան աղքատաց։ Զի այսպէս ետ Հրաման մեծ եպիսկոպոսապետն Ներսէս, և սոյն կամ եղեւ ամենայն սուրբ ժողովոյն զի այնպիսիքն միայն նստեալ լիցին միւրաքանչիւր

* Ս. Սինօդի ձեռագիրք եր. 158—161. Մենք կանոնագրքերի ձեռագիրներով գեռ ևս շատ քիշ ենք զրադուել, ուստի և յատկապէս այս կանոնների վաւերականութեանը երաշխառութեանը չենք կարող»

** Պատմ. ժողովոց Հայաստաննեայց եկեղեցւոյ. Ըստէ արք-եպիսկոպոս Միսիթարեանց. ի Աղքաշատի պատ. 1864 եր. 29—31. Համ. Ս. Սինօդի կանոնագիրքը եր. 155.

կայեանս: և մի ելանել ի մուրայն տառապանս, և մի՛ բնաւ ելանել ըստ իւրաքանչիւր դուրս, այլ զի ամենայն ոք պարաւապան է նոցա: Հարկ իսկ է, զի մի՛ կարգ աշխարհի, ասէ, եղծցի: այլ արժան է զի ամենեքեան առհասարակ ողորմածութեամբ և երկիւղիւ տարեալ նոցա զգարմանսն, և զպիայոյ նոցա վճարեցեն: * Աղքատաց վերատեսութիւնը Ներսէս Մ'եծ յանձնում է Խոդ սարկաւադին: ** Խ'նչպիսի քաղցր զգացմունքով է լցուում մեր սիրալ: երբ մենք Փաւստոսի մէջ Ներսէս Մ'եծի գործունեութեան նկարագիրն ենք կարգում: Հայաստանեաց եկեղեցու ողբարակն հայրապետի պատկերը կենդանանում է Քրիստոսի եկեղեցու ականաւոր հայրերի՝ Բարոսեղ Նեսարացու: Ոսկերեւանի և ուրիշների շարքում: մշարդ էր և ի տեղիս տեղիս զպրոց յունարէն և տառերէն յամենայն գաւառս Հայոց: և բազում նեղելոց և տառապելոց գերեաց փրկութիւն և գերեւդարձ առներ: . . . Այրեաց և որբոց և քաւորաց հանգիստ և դարման առներ: և աղքատք զօրհանապազ ընդնմա ուրախ լինեին: և տաճար իւր և սեղան զօրհանապազ աղքատաց և օտարաց էր և հիւրոց: Եւ այսպէս առ յոյժ աղքատսիրութեանն, զի թէպէտ և շինեաց զամենայն աղքատանոց ընդ ամենայն զաւառս և կարգեաց նոցա անդէն գարմանս: ոյսպէս զի ըստ իւրեանց անկողինս մահճացն մի ուրեք աշխատ լիցին ելանել, սակայն և զիւր տաճարն առանց սոցա ոչ առներ: այլ կաղք և կոյրք և մարմնահարք, խուլք և հաշմեալք և ցանկանեալք և կարօտեալք ընդ նմա և ի նորա ակըմի գարմանէին բազմեալք: Եւ ինքն իւրով ձեռօքն լուանայր զամենեաւան: օծանէր, սկատէր: և ինքնին իսկ ջամբէր նոցա զիւրաքանչիւր կիրակուրս, և զամենայն ինչ ի պէտքը նոցա ծախէր: և ամենայն օտարք ընդ նմա, հովանեաւ նորա հանգուցեալք, գագաւըէին: ***

Մ'ինչ զրին այս տողերն է արտազրում:

* Փաւստոսի Բուզանդացւոյ պատմ. Հայոց, Վենետիկ 1832 եր. 75, համ. Խորենացի, զիրք Գ. Դ. Ի.

** Փաւստոս. եր. 105.

*** Փաւստոս եր. 77.

մեր հոդին բարեմաղթում է, որ նոքա իւրաքանչիւր հայ եկեղեցականի պատի մէջ զրոշմուին: Եթէ մեր սրախն մօտ է Հայաստանեաց եկեղեցու վերակենդանութեան խնդիրը այս ևս մի կէտ է, որ արժանի է ամենախորին ուշաղրութեան: Այսօր ամեն մի համբակ, լրագրի էջերում երկու տող իրար կապող յօդուածաղիր իրաւունք է համարում խօսքեր շպատել եկեղեցու և նորա պաշտօնէութեան գէմն ժամանակի տիրող «մոլան» է այդ: Խրաւացի է, թէ անիրաւացի: այստեղ կանգ առնել չենք կարող: Բայց եթէ մեր սրախն մօտ է մեր եկեղեցու պատիւր, եթէ մեզ համար ցանկալի է նորա բարոյական հեղինակութիւնը պէտք է այն ձանապահը բանենք, որով մեր տապելաշաւիդ հայրեն են ընթացել: Փաւստոսի պատմութեան նայելով՝ ոչ միայն Ներսէս Մ'եծի բարոյական հեղինակութիւնն էր բարձր այլ յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն աեղիս Հայոց մեծաց: Դաս պէտք է վերցնել պատմութիւնից որ ներկայի և ապագայի համար ամենալաւ ուսուցիչն է: Բայց գառնանք մեր խնդրին:

Սահակ Պարթէեի անունով ևս թղթէր կան մնացած: որոնց մէջ նա եպիսկոպոսին պատուիրում է եկեղեցու զանձը նեղելոց և որբոց և այրեաց համար գործադրել իսկ հաւատացեալներին յորդորում է աղքատներին չմոռանալ: Որովհետեւ արդարի և մեղաւորի համար նաւահանգիստ է և աեղի յուսոյ փրկութեանն: ոււստի և իւրաքանչիւր ոք փութայ սրախն յօժարութեամբ զուխտս և զպատարազս և զընծայս իւր մատուցանելի իշխանք զգեստու և զգաստակերտս և զգանձս ոսկեոյ և արծաթոյ: այլք յանդաստանաց և ի պահարաց և ի հանդերձից պատուականաց Կորիւն սքանչելին ևս թէեւ շատ անցողակի կերպով, յիշումէ, ո. Մ'եսրոպի մասին, թէ քաղում բանդականաց և կարնականաց և տաղնապելոց ի բռնաւորաց թողութիւն արարեալ կորզեալ զնոսա ահաւոր զօրբութեամբն Քրիստոսի: Եւ բազում մուրհական անիրաւութեան պատառեաց: * Նա բազմա-

* Պատմ. Վարուց և մահուան օրբոյն Մեսրո-

թիւ վանքեր հաստատեց, որոնցից շատերը հաստատութիւններ պետք է լինեին, ինչպէս Սահմակ Պարթեի անունով մասցած թղթերից մակարերել կարելի է: Յովհան Մանդակունին իւր ճառերից երեքը* աղքատներին է, նուիրել: Հրեաների տասանորդներն ու միւս նուելները յիշելով՝ յորդորում է նա քրիստոնեաներին՝ աւելի առատ լինել: «Դու մի տրտմիցիս ընդ պակասիլ ընչիցն, զի ընդ նմին և մեղքդ պակասին» գրում է նա: Աստուած քազմակատիկ առատութեամբ դարձուցանէ ողորմածին զոգորմութիւնս նորաց: «Զի որ ողորմի աղքատացն, փոխ առյ Աստուծոյ. և զմինն հարիւրապատիկ գարձուցանէ: «Զի յորժամ զքաղցեալսն կերակրես, զՔրիստոս կերակրես, եթէ զջուր ծարաւոյն արքուցանսն, զՔրիստոս արքուցանս, եթէ զջուր ընդունիս զՔրիստոսնիս, և թէ օտարքն լինիս վանատու, Քրիստոսի ես ատպիջական. եթէ ի տեսս երթաս հիւանդին, առ Քրիստոս երթաս տեսանել...» Առաքելական շրջանի սէրն ու ընչից հաւասարութիւնը պատմելով յօրդորում է հիւանդիննել և աղքատների մասին մտածել: Շատ սրտաշարժ կերպով նկարագրում է նա աղքատների վիճակը և յորդորում է «Եւ արդ զայս ամենայն լսելով մի յատպեսուք ողորմել աղքատաց նեղիւց, եւ առաւել եւս խեղանդաւոցն եւ հիւանդացելոց, որոց եւ այրեաց եւ վշտացելոց, օտարաց, հիւրոց եւ ծերոց»:

Եթուագայ դարերում ևս աղքատները եկեղեցու հոգածութեան առարկայ են եղել Ներսէս թ. եկեղեցու տուբքի մի մասը յատկացնում է այրի կանանց: Նորա որոշմամբ Աղքատները որ աղքատների անունով նուելներ ենին պետք է քահանաները ընծայողների ներկայութեամբ բաժանեին աղքատներին: Նոյն պէս և նուիրուած կենդանիները պիտի զենուին և աղքատներին բաժանէին: **

պայ վարդապետի մերգյ թարգմանչի, Անենետիկ. 1894, եր. 35-36.

* Տեսան Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի ճառը. ի Անենետ. 1836, եր. 35, 45 և 60:

** Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապոյ Մամիկոնէից եպիսկոպոսին գլ. ԺԲ, ԻԱ.

Զ. գարում Սիւնեաց տշխարհում շինուեցաւ Գիւտոյ վանքը որ ուղիղունոց էր: * Ներսէս Շինողը 645 թ. կատարած ժողովում պատուիրում է եպիսկոպոսներին դպրոցների և տակարցների համար հոգալ և արգելում է իշխաններին նրանցից հարկ վերցնել: Սիւն Կաթուղիկոսը Պարտաւի ժողովում սահմանում է. «վանք շինեցաւ ի գեօգայ և շինեցին զի անդ հանգիցն առաջնորդը եկեղեցւոյ, հիւրք և աղքատք»: Նա սահմանում է նոյնպէս, որ խանգարուած անկելանոցները նորոգուին, ինչպէս որ բարեկատաշ իշխանքն անկելանոց շինեցին . . . և վիճակ կարգեցին գաւառաց ի գաւառաց անդը տալ զտուրս ողորմութեան ի միմիթարութիւնն նոցա: ** Ժողովուղից տուրք է նշանակում նոցա համար: Ասողիկ պատմում է Հոռոմասի վանքի հիմնադիր Յովհաննէս վարդապետի մտան (Ժ. Գար), թէ ողորմութեամբ և առաքինութեամբ բաշխէր, մինչ չե ի զգեստուցն իւրոց մերկանայր զամենայն ի բաց, յորժամ աղքատաց հանգիպէր: և անցաւորաց ի ճանապարհորդաց հանգստարան պատրաստէր զտեղին՝ մինչև հանգել իրը յիւրեանց տան ամենայն օտարաց, որ մինչև ցայսօր ի նոյն նշան ողորմածութեան ի տան յայնմ: Այսպէս և յայսմ ժամանակի Նարեկ ի Ռշտունեաց զտառին նոյն կարգազրութեամբ, բազմամարդ պաշտօնապայծառ երգեցեղովք և զրական դիտողք: ***

Այսպանն էլ բաւական է ցոյց տալու համար, թէ Հայաստանեաց եկեղեցին ևս իւր սրբազն պարտականութիւններից մէկն է համարել աղքատների խնամատարութեան զործը:

(Կը շարունակուի).

Գարեզին Սարկուազ:

* Օրբելեան Հատոր Ա. զԼ. ԻԱ. համ. Առատանեանց. Հայոց վանքերը եր. 29.

** Կանոնք Սիւնի Հայոց կաթուղիկոսի:

*** Ասողիկ, թ. զԼ. Է..